

### 5.9. 33 տարածքի 2003թ. հունվարի հիդրոոդերևութաբանական պայմանների բնութագիրը

Ըստ 33 բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2003թ. հունվարի օդի միջին ամսական ջերմաստիճանը 33 տարածքի գերակշռող մասում նորմայից բարձր է եղել  $2-4^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում՝ նորմային մոտ և դրանից  $1^{\circ}\text{C}$  ցածր, Գորիսում և Քաջարանում՝  $1^{\circ}\text{C}$  ցածր: Լեռնային շրջաններում ջերմաստիճանը տատանվել է  $4-7^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում և Սյունիքի նախալեռներում՝  $2-5^{\circ}\text{C}$  ցրտի, Տավուշում, Սյունիքի հովիտներում և Արցախում՝  $1-4^{\circ}\text{C}$  տաքության սահմաններում:

Ցածր ջերմաստիճան գրանցվել է II տասնօրյակի վերջին և III տասնօրյակի սկզբին, երբ օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից  $3-5^{\circ}\text{C}$ :

Այդ օրերին Լոռիում, Շիրակում և Գեղարքունիքում նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև  $-15-24^{\circ}\text{C}$  (Աշոցքում, Գավառում՝  $-29^{\circ}\text{C}$ ), Արարատյան դաշտում, Սյունիքի նախալեռներում՝  $-8-15^{\circ}\text{C}$ , Տավուշում, Սյունիքի հովիտներում՝  $-4-10^{\circ}\text{C}$ :

Բարձր ջերմաստիճան է գրանցվել հատկապես հունվարի 7-12-ին և 30-31-ին: Տավուշում, Սյունիքի հովիտներում, Արցախում առավելագույնը հասել է  $+17+22^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝  $+8+11^{\circ}\text{C}$ , Լեռնային շրջաններում՝  $+3+6^{\circ}\text{C}$ :

2003թ. հունվարն առանձնացել է տեղումների սակավությամբ: Ամսական տեղումների քանակը Տավուշում կազմել է նորմայի 30-35%-ը, Լոռիում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքում՝ 55-80%-ը:

Ուժեղ քամի գրանցվել է հունվարի 4-13-ը և 30-31-ը՝ Գեղարքունիքում և Լոռիում: Քամու առավելագույն արագությունը հասել է 15-18 մ/վրկ, պոռթկումները՝ 30մ/վրկ:

Ձյան ծածկույթի բարձրությունը հունվարի 31-ի դրությամբ Վայոց ձորի Լեռնային շրջաններում (Ջերմուկ) կազմել է 60 սմ, Շիրակում՝ 30-60 սմ, Կոտայքում՝ 40 սմ, Արագածոտնի Լեռնային շրջաններում (Ապարան)՝ 34 սմ, Գեղարքունիքում՝ 15-18 սմ, Արարատյան դաշտում՝ 4-6 սմ:

Հունվարին հանրապետության գետերի մեծ մասում ջրի միջին ամսական ելքերը մոտավորապես կազմել են նորմայի 80-100%-ը, իսկ հյուսիսային շրջանի գետերում՝ 100-120%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա առաջին կեսին իջել է 2 սմ-ով, իսկ երկրորդ կեսին՝ բարձրացել է 3 սմ-ով և հունվարի 31-ի դրությամբ կազմել 1896.77 մ, որն 2002թ. նույն օրվա համեմատ բարձր է 44 սմ-ով: Ամսվա ընթացքում լճի եզրասառույցը պահպանվել է: